Հովհաննես Թումանյան

Խելոքն ու հիմարը

Երկու ախպեր են լինում . մինը՝ խելոք, մյուսը՝ հիմար: Խելոք ախպերը միշտ բանեցնում ու չարչարում է հիմարին: Էնքան չարչարում է, որ հիմարը հուսահատվում է, մի օր էլ կանգնում է, թե՝

- Ախպե՛ր, էլ չեմ ուզում քեզ հետ կենամ, բաժանվում եմ, իմ բաժինը տուր, գնամ ջոկ ապրեմ:

- Լա՛վ,- ասում է խելոքը,- էսօր էլ դու ապրանքը ջուրը տար, ես կերը տամ, երբ ջրից բերես, որ ապրանքը գոմը մտնի՝ ինձ, որը դուրսը մնա՝ քեզ:

Ժամանակն էլ լինում է ձմեռ:

Հիմարը համաձայնում է: Ապրանքը ջուրն է տանում, ետ բերում:

Ձմեռվա ցուրտ օ՜ր, մրսած անասուններ . հենց տաք գոմի դուռն են հասնում թե չէ՝ իրար ետևից ներս են թափում: Դռանը մնում է մի հիվանդ քոսոտ մոզի՝ գերաններին քոր անելիս: Էն է մնում հիմարին:

Էս հիմարը թոկը վիզն է կապում, իր մոզին տանում ծախելու:

- Ա՛ մոզի, արի, հե՜յ,- կանչելով գնում է:

Մի հին ավերակի մոտից անցնելիս էլ որ ձեն է տալի՝ ա՛ մոզի, արի, հե՜յ . . . , ավերակի արձագանքը կրկնում է .

- Հե՛յ . . .

Հիմարը կանգնում է:

- Ինձ հետ ես խոսում, հա՞ . . .

Ավերակը ձայն է տալի .

- Հա՛ . . .

- Մոգին ուզում ե՞ս:

- Ե՛ս . . . Քանի՞ մանեթ կտաս:

Տա՛ս . . .

Հիմի կտա՞ս, թե՞ չէ:

Չէ՛ . . .

Դե էգուց կգամ, որտեղից որ է՝ ճարի՛ . . .

Արի՛ . . .

Հիմարը համաձայնում է ու մոգին ծախված համարելով՝ ավերակի դռանը կապում է, շվշվացնելով վերադառնում տուն:

Մյուս օրը առավոտը վաղ վեր է կենում, գնում փողերն առնելու: Դու մի՛ ասիլ՝ գիշերը գայլերը մոգին կերել են: Գնում է տեսնում՝ ոսկորները դեսուդեն ցրված ավերակի առջև:

Հը՞, ասում է, մորթել ես, կերել, հա՛:

Հա՛ . . .

Չաղ է՞ր, թե՞ չէ:

Չէ՛:

Հիմարը էստեղ վախենում է, կարծում է՝ ավերակի մտքումը կա, որ իր փողը չտա:

Էդ իմ բանը չի, ասում է, առել ես, պրծել, ես իմ փողի տերն եմ, բեր իմ փողը՝ տասը մանեթ դեղին ոսկի՛ . . .

Սկի՛ . . .

Էս էլ որ լսում է հիմարը, բարկանում է, ձեռի փետը ետ է տանում, տուր թե կտաս ավերակի խարխուլ պատերին: Մին, երկու զարկում է . պատերից մի քանի քար են վեր ընկնում: Դու մի ասիլ՝ հնուց էդ պատում գանձ է եղել պահած: Քարերը որ վեր են ընկնում՝ ոսկին թափում է հանկարծ առաջը, լցվում:

Ա՛յ էդպես . . . բայց էսքանն ի՞նչ եմ անում, տասը մանեթ ես պարտ՝ իմ տասը մանեթը տուր, մնացածը քու փողն է, ընչի՞ս է պետք . . .

Մի ոսկի է վերցնում, գալի տուն:

Հը՞, մոզիդ ծախեցի՞ր, ծիծաղելով հարցնում է խելոք ախպերը:

Ծախեցի:

Ո՞ւմ վրա: Ավերակի:

Հետո՞, փող տվա՞վ:

Իհարկե, տվավ: Դեռ չէր ուզում տա, ամա ձեռիս փետովը որ մի քանի հասցրի, ինչ ուներ՝ առաջիս փռեց: Իմ տասը մանեթը վեր կալա, մնացածն իրենն էր, հենց թողեցի էնպես փռված:

Ասում է ու ոսկին հանում, ցույց տալի:

Էդ ո՞րտեղ է, աչքերը չորս է անում խելոք ախպերը:

Է՛հ, ցույց չեմ տալ, դու աչքածակ ես, էնքան կհավաքես, շալակս կտաս, որ մեջքս կկոտրի:

Խելոքը երդվում է, որ մենակ ինքը կշալակի, միայն թե տեղը ցույց տա:

Բեր, ասում է, ձեռինդ էլ ինձ տուր, մնացածի տեղն էլ ցույց տուր, որ տեսնեմ ես՝ տկլոր ես, քեզ համար նոր շորեր առնեմ:

Հիմարը նոր շորերի անունը որ լսում է՝ ձեռինն էլ է տալի ախպորը, տանում է, մնացածի տեղն էլ ցույց տալի: Խելոքը ոսկին հավաքում է, բերում տուն, հարստանում, բայց ախպոր համար նոր շորեր չի առնում:

Էս հիմարը ասում է, ասում է, որ տեսնում է՝ չի լինում, գնում է դատավորի մոտ գանգատ:

Պարոն դատավոր, ասում է, ես մի մոգի ունեի, տարա ավերակի վրա ծախեցի . . .

Հերի՛ք է, հերի՛ք, ընդհատում է դատավորը, էս հիմարը ո՞րտեղից եկավ, ո՛նց թե մոգին ավերակի վրա ծախեցի . . . վրեն ծիծաղում է ու դուրս անում:

Գնում է, որիշներին գանգատվում, նրանք էլ են վրեն ծիծաղում:

Ու, ասում են, մինչև էսօր էլ խեղճ հիմարը կիսամերկ ման է գալի, պատահողին գանգատվում, բայց ոչ ոք չի հավատում, ամենքն էլ ծիծաղում են վրեն, ու խելոք ախպերն էլ ծիծաղում է ամենքի հետ: